ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ

ԵՒ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Պաշտօնական

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ուկաղ Կառավարիչ Սենատին։ Վերա-կանգնելով Կովկասում Մեր փոխարքայութիւնը, Մենք Կովկասի կառավարութեան համար Մեր վստահութեամբ ընտրուած անձի վրայ պարտաւորութիւն դրինք վերա-կանգնել այդ բարելից երկրում խանգարուած հասարա-կական կեանքի խաղաղութիւնը։ Ներկայումս Փոխարքան՝ իրեն հաւատացած երկրի պայմաններին ծանօթանալուց յետոյ, Մեզ ներկայացրած է իւր կարծիքը փոփոխելու հայ ազգաբնակութեան վերաբերեալ մի քանի կարգա-դրութիւններ, որոնք արդելք էին լինում նրա կանոնա-ւոր և խաղաղ զարգացման։ Օգտակար գտնելով հաստա-տել Մեր Փոխարքայի առաջարկութիւնը, Մենք շնորհում ենք Հայ-Լուսաւորչական հոգևորականութեան ժողովրդի լուսաւորութեան համար անհրաժեշտ գործունէութեան ընդարձակ միջոցներ։ Ընդ սմին հրամայելով ստորև յի-շատակած ձևով վերադարձնել հայոց եկեղեցական հիմնարկութեանց պատկանող գրաւուած կալուածները (գոյքը), Մենք թոյլատրում ենք Մեր Փոխարքային նորա տեսչութեան յանձնուած երկրի սահմաններում հէնց այժմեանից ժամանակաւորապէս գործադրել այդ մինչև

օրէնսդրական եղանակաւ կը քննուին կազմուած կանոնները, որոնք պէտք է ապահովեն ծխականների մասնակցութիւնը եկեղեցական գոյքի կառավարութեան գործում. իսկ այսուհետև ծագող թիւրիմացութեանց առաջն առնելու համար, որոնք կարող են առաջանալ գոյութիւն ունեցող օրէնսդրութեան թերութիւնից, Փոխարքան պարտաւոր է մշակել իշխանութեան և Հայոց եկեղեցւոյ հաստատութիւնների յարաբերութեանց սահմանները։ Ըստ այսմ հրամայում ենք. 1) Վերացնելով 1903 թուի յունիսի 12-ի օրէնքը, դարձնել Հայ-Լուսաւորչական եկեղեցու կառավարութեան և իրաւասութեան այն բոլոր անշարժ կալուածներն ու դրամագլուխները, որոնք պատկանում էին Հայ-Լուսաւորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին և հոգևոր կրթական հիմնարկութիւններին այն եկամուտների հետ, որ ստացուել են պետական կառավարութեան ժամանակաշրջանում, բառնալով կալուածներն ընդունելու և կառավարելու ժամանակ տեղի ունեցած ծախսերը։ Կալուածների և եկամուտների եկեղեցական հիմնարկութեանց յանձնելը կատարել Մեր Փոխարքայի, Ներքին գործոց Նախարարի և երկրագործութեան ու հողատիրութեան կանոնաւորութեան գլխաւոր կառավարչի համաձայնութեամբ։

2) Հայ հոգևորականութեան խնդիրների և միջնորդութիւնների վերջնական լուծումը այդ կալուածներն ու եկամուտներն դարձնելու մասին՝ յանձնել Մեր Կովկասեան Փոխարքային։

3) Մինչև հայոց եկեղեցական ծխական դպրոցների նոր կանոնադրութիւն մշակելը, յանձնարարել Կովկասեան Փոխարքային՝ թոյլատրել Կովկասի փոխարքայութեան սահմաններում բանալ եկեղեցիներին և վանքերին կից եկեղեցական ծխական դպրոցներ 1874 թուի յուլիսի 19-ին Բարձրագոյն հաստատուած կանոնների համաձայն։ 4) Յանձնարարել Փոխարքային ա) առանց յետաձգելու որոշեալ կարգով ներկայացնել այլ հաստատութեանց հետ բանակցելուց անկախ՝ նոր կանոնադրութիւն

հայոց եկեղեցական դպրոցների և այն կալուածներն ու գոյքը վերադարձնելու մասին, որոնք՝ համաձայն 1898 թուի մարտի 26-ի և 1903 թուի յունիսի 12-ի մինիստրների կոմիտէի Բարձրագոյն հաստատուած կանոններով յանձնուած էին լուսաւորութեան նախարարութեան. բ) մշակել դանձարանի աջակցութեամբ Հայ-Լուսաւորչական եկեղեցիներին պատկանող ընակեցրած տեղերի մասին օրէնքներ և առաջարկել այդ եղրակացութիւնները Մեզ օրինական կարգով ի հաստատութիւն։ Վերոյիշեալներն ի կատար ածելու համար յանձնում ենք Սենատին տնօրինել ինչ որ պէտքն է։

Իսկականի վրայ ստորագրուած է Նորին Կայսերական Մեծութեան ձեռամբ **ՆԻԿՈԼԱՈՍ**։

Պետերբուրգ 1-ն Օգոստոսի
1905 թիւ.